ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

ԳԾԱՆԿԱՐԻՉ ՎԱՆՕ ԽՕՋԱԲԷԳԵԱՆ

(ՄԱՀՈՒԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Թիֆլիսի Վերայի գերեզմանատանը, լքուած ու մոռացուած մի անշուք շիրմի ներքոյ, հանդչում է ժողովրդական տաղանդաւոր մի նկարիչ, որն իր պարզ, բայց գեղարուեստական նկարներով եւ միանգամայն ինքնատիպ արուեստով առանձնայատուկ տեղ է գրաւում հայ նըկարչական մշակոյթի պատմութեան մէջ: Դա լաւագոյն վարպետ գծանկարիչ Վանօ Խօջաբէգեանն է, մէկը հայ գեղարուեստի այն պայծառ դէմքերից, որոնք, չնորհիւ իրենց տաղանդի, հայ նկարչութեան զարգացման գծով նշանակալից դեր են կատարել: Նա հանդիսացել է ո՛չ միայն հայ գծանկարչութեան ռահվիրան, այլ եւ իր գեղարուեստական գործունէութեան ընթացքում ստեղծագործել է այնպիսի ուշադրաւ ու գեղեցիկ նկարներ, որոնք այսօր արժէքաւորում են նրա անունը: Սակայն, չնայած այդ հանգամանքին, նրա նկարչական արուեստի գեղեցկութիւնն ու խորութիւնը ժողովրդական լայն խաւերին դեռ բազմակողմանի կերպով չեն լուսաբանուած: Այսօր, սակայն, ժամանակն է, որ գաղթաշխարհի հայութիւնը եւս ծանօթանայ նրա արուեստի էութեան հետ:

Որո՞նք են Խօջաբէգեանի նկարչական արուեստի հիմնական ու բնորոշ յատկանիշները:

Խորապէս ուսումնասիրեցէք քսան տարուայ ընթացքում նրա մէկը միւսից գեղեցիկ եւ տարբեր բովանդակութեամբ գծած նկարները եւ դուք հոն ցայտուն կերպով պիտի տեսնէք նկարչի արուեստի էական առանձնայատկութիւնները: Այդ նկարներում նա հանդէս է գալիս որպէս ժանրիստ, գրաֆիկ, երգիծարան, ազգագրագէտ եւ այլն: Սակայն, նրա գեղարուեստի էութիւնը բնորոշւում է միայն եւ միայն գծանկարչութեամբ: Ահա այն ուղին, որով նա անսայթաք քայլել է: Ահա թէ ինչո՛ւ նրա նկարելու միջոցները շատ պարզ են — մի հասարակ մատիտ եւ սպիտակ թուղթ: Այս է պատճառը, որ նրա նկարներում չէք տեսնում գոյներ եւ երանգներ, այլ՝ միայն գծեր եւ դարձեալ գծեր: Գծերով է նա ձեզ հետ խօսում, գծերով է ամէն մի նկարի էութիւնն ու խորութիւնն արտայայտում: Միակ փորձը, որ նա արել է, ջրաներկն է (ակւարէլի), բայց այդ նրան չի բաւարարել եւ նա ամբողջապէս նուիրւել է գրաֆիկ նկարչութեան: Հասարակ մատիտի գծագրութեամբ էլ նա արտայայտել է իր ժամանակի դրութիւնները, ապրումները եւ հասարակական կեանքից ստացած իր տպաւորութիւնները: Միմիայն պարզ եւ հասարակ գծերով պատկերել է նա ժողովրդի կեանքից խմբական տեսարաններ, ուր տեսնում էք տարբեր դէմքեր եւ արտայայտութիւններ: Առհասարակ, մի հանգամանք պարզ է, որ Խօջաբէգեանը գրաֆիկ նկարչութիւնը հասցրել է նրբութեան եւ կատարելութեան: Այդ տեսակէտից նա իր ժամանակի միակ լաւագոյն գրաֆիկ հայ նկարիչն է: Իր ուրոյն ոճով եւ տէխնիկայով էլ նա իր ժամանակաշրջանի միւս տաղանդաւոր նկարիչներից միանգամայն տարբերւում է:

Այնուհետեւ պիտի ընդգծել նրա նկարներում իշխող հոգեբանական վերլուծութիւնը: Նա ո՛չ միայն դէմքեր ու տիպարներ գծելու խոշոր ձիրք է ունեցել, այլ եւ նրանց հոգեկան աշխարհը հարազատօրէն դրսեւորելու մի առանձին յատկութիւն, գծեր, որոնք լաւագոյն նկարչի յատկանիշեր են: Դիտեցէ՛ք դուք նրա գըծագրած տարբեր արտայայտութիւններ պատկերող դէմքերը եւ նրանց վրայ պիտի կարդաք տեւալ անձերի հոգեկան ապրումները, նրանց լիրիքական յոյզերն ու մտորումները: Առհասարակ, նկարչի գրաֆիկական հայկական դիմանկարչական արուեստում իւրայատուկ տեղ է գրաւում նրանով, որ նա ցայտուն գծագրութեամբ տըւել է այս կամ այն գործող անձին, նկարել է կենդանի մարդկանց կերպարները, իրենց յատուկ արտայայտութեամբ, միմիկայով, կեցուածքով եւ բնորոշ նկարագրով: Աւելին: Նա իր նկարած դիմանկարներում խտացնելով իր տիպարների արտաքին գծերը, պատկերների մէջ դրել է տեւալ անձերին բնորոշող որոշ տրամադրութիւններ, նկարելով նրանց ներքինն արտայայտող էական յատկութիւնները:

Բնորոշ է եւ ա՛յն, որ նկարիչն ըմբռնել է ո՛չ միայն մարդկանց ապրումները, այլ եւ կենդանիների հոգեբանութիւնը: Նրա նկարած ձիերի, էշերի, գոմէշների և այլ կենդանիների գծագրութեան մէջ տեսնում էք անխօս անասունների հետ հոգեկան դրութիւնը, հանգամանքներ, որոնք վկայում են, որ Խօջաբէգեանը հոգեբանական նկարիչ է, որ նա ունեցել է դիտելու, զննելու եւ վերլուծելու հարուստ տեւալներ: Անդամ նրա աչքից չեն վրիպել հասարակական երեւոյթների ամէնաէական եւ տիպիկական գծերի բնորոշ մանրամասնութիւնները: Այդ է պատճառը, որ նրա գըծանկարներում տեսնում էք ե՛ւ հարուստ բովանդակութիւն, ե՛ւ հոգեբանական վերլուծութիւն, ե՛ւ բանաստեղծութիւն: Թերեւս այդ էական երեւոյթներով էլ պիտի բացատրել նրա գծած տիպարների, տեսարանների եւ առհասարակ նկարների կոմպոզիցիայի մէջ իշխող գեղեցիկ ներդաշնակութիւնը:

Առանձնապէս չեշտենք նաեւ նրա որոշ ստեղծագործութիւնների մէջ տիրող նուրբ հիւմորը, մի գիծ, որը նկարչի նկարներին տալիս է ուրախ, զւարթ արտայայտութիւն եւ առանձին երանգ: Ահա թէ ինչո՛ւ Խօջաբէգեանին կարելի է դասել հիւմորիստ նկարիչների շարքում:

Նկարչի արուեստում տեսնում էք նաեւ ազգագրական գծեր ու պատկերներ: Նա ազգագրագէտի վարպետ վրձինով նկարել է հին, անհետացող Թիֆլիսի հասարակ ժողովրդի վարք եւ բարքի, կենցաղի բնորոշ էջերը — հարսանիք, մկրտութիւն, ուրախութիւն, ղէյնօբա, օրա՛ (տօն), պար, թաղում եւ այլ երեւոյթներ, որոնց նկարել է նա ա՛յնքան հարազատ եւ պայծառ գծերով: Այդ նկարներում դրսեւորւող ազգագրական գծերն էլ նշում են, որ Վանօն հայ կենցաղը ներկայացնող աննըման վարպետ է եւ էթնոգրաֆ նկարիչների շարքում ուրոյն տեղ է գրաւում:

Խօջաբէգեանի արուեստի մի այլ էական յատկանիշը նրա գծանկարներում իշխող գեղարուեստականութիւնն է: Նա Թիֆլիսի աշխատաւորական խաւի տիպարները եւ ժողովրդի կենցաղի բնորոշող երեւոյթները պատկերել է ո՛չ միայն հարազատ գծագրութեամբ, այլ եւ բանաստեղծական շնչով: Դիտեցէ՛ք նրա որեւէ նկարը և դուք այնտեղ հոգեբանական վերլուծութեան ու ազգագրական տարրերի հետ պիտի տեսնէք նաեւ գեղարուեստական նուրբ պատկերաւորութիւն: Այդ տեսակէտից ահա նա իր ժամանակի ու միջավայրի բանաստեղծ-նկարիչն է:

Նրա գծանկարների գեղարուեստական յատկանիշներից մէկն էլ հարուստ դինամիկան է, որ առանձնապէս դրսերեւորւում է իւրաքանչիւր նկարի մէջ եւ խորացնում է նկարչական տպաւորութիւնը:

Նկարչի արուեստի էական առանձնայատկութիւններն արձանագրելիս անպայմանօրէն պիտի ընդգծել նրա նկարների մէջ իշխող ռէալիստական գիծը: Որ ամէն մի արուեստագէտ իր ժամանակի հասարակական կեանքի եւ բնութեան երեւոյթների արտայայտիչը պիտի հանդիսանայ, դա

© National Library of Armenia

արդէն անժխտելի մի ճշմարտութիւն է: Այդ տեսակէտը շատ պայծառ կերպով ձեւակերպել է եւ շեշտել ռուս յայտնի քննադատ Բելինսկին: Արուեստի էական յատկութիւնը նա համարում է իրականութեան դրսեւորումը: Դա, ի հարկէ, իր ժամանակի լաւագոյն քննադատի գիւտը չէ, այլ պատմաչրջանի հրամայողական պահանջը: Այդ տեսակէտից ահա բնորոշ է նկարչի արուեստը: Նա գծել է միայն իր ապրած ժամանակի հասարակական կեանքի եւ կենդանի տիպարների պատկերը: Դա իր էութեամբ հէնց ռէալիզմն է: Այդ երեւոյթով էլ պիտի բացատրել, որ նրա գծած պատկերներն ու կերպարները, ասես, խօսում են ձեզ հետ, պատմում ժողովրդի կեանքն՝ իր տարբեր եւ դունագեղ երեսներով, իսկ ո՛վքեր ծանօթ են անհետացող Թիֆլիսին, ճանաչում են երէկուայ գործող կերպարներից շատ շատերին: Այնտեղ էլ կայանում է նկարչի արուեստի հասարակական արժէքը:

Նշանակալից երեւոյթ է նաեւ այն, որ Խօջաբէգեանն իր ստեղծագործութիւններով ձգտել է ո՛չ միայն ռէալիստական պատկերաւորմանն ու իրականութեան ճշգրիտ վերարտադրութեանը, այլեւ սիրել է նկարել խմբական տեսարաններ եւ գործողութիւններ՝ հոգեկան ապրումների հարազատ դրսեւորումով: Ուշադրաւ է եւ ա՛յն, որ նա իր ընտրած տարբեր նիւթերով երեւան է հանել ժողովրդի կեանքի բազմերանգութիւնը, որոնք ձեզ պատկերում են կենցաղային տարբեր սովորութիւններ: Ահա թէ ինչո՛ւ նրա գծանկարները, ժողովրդական ուրոյն կեանքի մասին ցայտուն գաղափար կազմելու համար, շատ բնորոշ են, որպէս խտացած արտայայտութիւններ:

Ընդգծենք, վերջապէս, որ նկարիչն ունի ինքնատիպ արուեստ, սքանչելի կոմպոզիցիաներ, չափազանց արտայայտիչ դէմքեր եւ նուրբ կերպով դասաւորուած խմբական տեսարաններ, իսկ նկարների մշակման կուլտուրայի եւ իր մտայղացումները պատկերելու տեսակէտից՝ նա անմիջական է, կոնկրէտ եւ այժմէական, երեւոյթներ, որոնք նրա գծանկարները դարձնում են ժողովրդի համար աւելի հասկանալի եւ աւելի հարազատ:

Այժմ տեսնենք, թէ Խօջաբէգեանը հասարակական ո՞ր խաւի եւ միջավայրի նկարիչն է:

Մի հանգամանք պարզ է, որ արուեստագէտն ունի իր ստեղծագործութիւնների յատուկ եւ ուրոյն միջավայրը: Դա նախկին Անդրկովկասի եւ այսօրուայ Վրաստանի մայրաքաղաքն է — Թիֆլիսը: Նկարչի գծանկարների նիւթերն ընդհանրապէս պատկերում են այդ միջավայրի ժողովրդի հին կենցաղն ու տիպարները, դրսեւորում են Թիֆլիսի կոլորիտն ու շարժումը (դինամիկան):

Եթէ տաղանդաւոր աշուղ Սայեաթ-Նովան իր քնարական աննման երգերով արտայայտել է աշխատաւոր դասի սիրային զգացումները եւ Թիֆլիսի ժողովրդական լեզուի դունագեղութիւնն ու նրբութիւնը, եթէ յայտնի թատերագիր՝ Գաբրիէլ Սունդուկեանն իր հոյակապ «Պէպո» պիէսով վրձինել է Թիֆլիսի հայ հասարակութեան հակադիր խաւերի պատկերը՝ Զիմզիմովի եւ Պէպոի գեղարուեստական կենդանի տիպերով եւ նրանց հոգեբանութեան ուրոյն գծերով ու տիպիկ կենցաղով, միաժամանակ անխնայ խարազանել է հայ կեղեքիչներին եւ գծել օրուայ հացն իրենց հալալ քրտինքով ձեռք բերող կինտօներին, եթէ տաղանդաւոր ռէալիստ վիպագիր՝ Նար-Դոսն իր «Մեր Բաղը» պատմուածքներով նկարել է մեծ քաղաքի՝ Թիֆլիսի, խուլ թաղերում իրենց գոյութիւնը քարշ տուող չքաւոր դասակարգի, գլխաւորապէս Հալլաբարի բնակիչներ՝ չարքաշ կեանքը, պատկերել է նրանց մէջ տիրող մտաւոր թանձր խաւարը, նախապաշարումները, նրանց ընտանեկան յարաբերութիւնների ներքին՝ հոգեբանական խոր գծերը, արձանագրել է կնոջ ստրկական վիճակը, ապա նկարիչ Խօջաբէգեանը մտնելով նոյն միջավայրի իրեն հարազատ դասի Պէպոների, Գիքորների եւ Կակուլինների աշխարհը, իր գծանկարներով անմահացրել է նրանց տիպարները, կենցաղը, վարք ու բարքը, սովորութիւնները եւ հոգեբանութիւնը: Ահա թէ ինչո՛ւ նրան պիտի համարել Թիֆլիսի հարազատ խաւի ամենալաւագոյն նկարիչը:

Սակայն կայ մի հանգամանք եւս: Խօջաբէգեանը, Գաբրիէլ Սունդուկեանի եւ Նար-Դոսի նման, չի պատկերել ժողովրդական հարազատ դասի ընտանեկան ներքին կեանքի բացասական երեւոյթները, այլ նկատելի է նրանց այն գծերը, որոնք ունեն գլխաւորապէս ուրախ երանգաւորում: Նրա գծած պատկերներում դուք տեսնում էք ժողովրդական հասարակ դասի զարգացումը Կուր գետի վրայ, ծանօթանում էք նրանց հարսանիքի, պարերի, գօտեմարտի, մեռելահաց ուտողների, խոյերի կռիւ եւ այլ հանգամանքների հետ: Նշանակալից է նաեւ այն, որ նկարչի նկարած տիպարների դէմքերի վրայ, ինչպէս նշել եմ, կարդում էք նրանց ներքին ապրումներն ու հոգեբանութիւնը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թէհրան, 1950



ՆՄՈՅՇՆԵՐ ՎԱՆՕ ԽՕՋԱԲԷԳԵԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԷՆ



© National Library of Armenia